# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«12» հունիսի 2026թ. N ՄՊ/328-Ա

ք. Արմավիր

### «ԱՐՏԱՇԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԱՐԻՍԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Լարիսա Պետրոսյանի 2026 թվականի հունիսի 11-ի դիմումը.

ո ր ո շ ու մ  ե մ՝

1. «Արտաշարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լարիսա Պետրոսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը 2026 թվականի հունիսի 16-ից 29-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լարիսա Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արտաշարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արտաշարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Կարինե Հարությունյանին:
3. «Արտաշարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Կարինե Հարությունյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հունիսի 16-ից 29-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լարիսա Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հունիսի 30-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ